— Դէ՛, դու էլ:

Մանկահասակ աղջիկը, հօր օրինակին հետեւելով, նոյնպէս ցատկեց նաւակի մէջ եւ տեղաւորեց այնտեղ մեր նախաճաշիկի համար պատրաստած պաշարը. տապակած հաւեր, պանիր, սպիտակ լաւաշներ եւ մի շիշ գինի: Ասլանը նոյնպէս անցաւ, բայց ես փայտի նման կանգնած մնացի ափի վրայ: Ինձ համար տախտակ դրեցին, վրայից անցայ: Կարո՞ղ էք երեւակայել իմ ամօթը, իմ քրտինքը Ծովիկի առջեւ:

Վարպետ Փանոսը, եզրից բարի ճանապարհ մաղթելով, Ծովիկի հետ վերադարձաւ դէպի գիւղը: Նաւակը սկսեց լողալ: Նրա մէջ տարածած էր մի փոքրիկ գորգ, որի վրայ նստեցինք ես ու Ասլանը:

Ծովը հանդարտ էր: Նաւակը լողում էր առանց օրօրոելու: Առաջին անգամն էր, որ ես ծովային ճանապարհորդութիւն էի անում, եւ իմ ուրախութեանը չափ չկար: Ասլանը նոյնպէս լաւ տրամադրութեան մէջ էր երեւում, բայց լուռ էր: Նա գտնւում էր մի տեսակ յափշտակութեան մէջ: Անտարակոյս, ծովային սքանչելի առաւօտը չէր, որ իր գեղեցիկ տեսարաններով նրա ուշադրութիւնը գրաւէր: Ո՞վ գիտէ, ի՞նչ բանի վրայ էր մտածում նա: Մտածո՞ւմ էր արդեօք այն բանի վրայ, որ նրա մշտական ցնորքն էր, որի մասին շատ անգամ խօսացել էր ինձ հետ, թէ պէտք է արդիւնաւոր կացուցանել ջրային այդ մեծ աւազանը եւ, զարգացնելով նրա վրայ կանոնաւոր նաւագնացութիւնը, պէտք է աւելի սերտ կապերով միացնել շրջակայ գաւառների յարաբերութիւնները: Մտածո՞ւմ էր արդեօք այն բանի վրայ, որը ինձ բոլորովին անկարելի էր թւում, թէ պէտք է մի ջրանցք բաց անել եւ, սկսելով այդ ծովի արեւմտեան ափերից, հասցնել մինչեւ Եփրատ (Արածանի) գետը, որը ճեղքելով անցնում է Մուշի ամբողջ դաշտի երկարութեամբ եւ, վերջը խառնելով Տիգրիսի հետ, թափւում է Պարսից ծոցը: Այսպիսով մի ճանապարհ կը բացուէր Հայաստանի սրտից, որը, Արաբական ծովի եւ Հնդկական օւկիանոսի միջնորդութեամբ կը կապէր այդ սիրտը Հնդկաստանի հարուստ հայ գաղթականութեան հետ: Ի՞նչ էր մտածում նա, ես չգիտեմ եւ անկարող էի գիտենալ: Այսքանը միայն ինձ յայտնի էր, որ նա մանր բաների վրայ մտածելու սովորութիւն չունէր: Ինձ յայտնի էր եւ այն, որպէս նախընթաց օրը խօսեց սրբազնութեան՝ առաջնորդի հետ եւ նրանից յանձնարարական թուղթ ստացաւ, նա գնում էր Կտուց անապատը՝ այդ կղզու մէջ պահուած մագաղաթները հետազօտելու համար: Արդեո՞ք այդ եւս մի պատրուակ չէր, որի մէջ թաքնուած էին այլ նպատակներ...

Ես էլ լուռ էի, բայց ես ջրանցքի, նաւագնացութեան եւ ծովի վրայ չէի մտածում. իմ մտածութիւնները շատ անմեղ էին, ես մտածում էի միայն Ծո-